
**ՌՈՒՄ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ (1843-1914)**

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ Ռ. Ա.

Ռուս դասական գրականության հայերեն թարգմանությունները ունեցել են ինքնատիպ զարգացում՝ պայմանավորված են եղել ոչ միայն հայ ժողովրդի երկու հատվածների հասարակական-քաղաքական կյանքով, այլև մշակութային ազդեցություններով ու կապերով, ժամանակի գեղագիտական պահանջներով: Եվ որքան դյուրին ու անմիջական է եղել արևելահայերեն թարգմանությունների գործընթացը, նույնքան բարդ ու դժվարին՝ արևմտահայերենը: Սակայն վստահությամբ կարելի է ասել, որ ն՝ արևելահայ, և՛ արևմտահայ մտավորականությունը ոչ միայն ընդունում էր ռուս գրականության համաշխարհային դերն ու նշանակությունը, այլև այն թարգմանելու անհրաժեշտությունը համարում կարևորագույն խնդիր հայ գրականության զարգացման ու հարստացման գործում. «Ռուս գրականության մեջ, մանավանդ վաթսուհարյուրյան թվականներին և թե նրանից հետո, - գրում է գրականագետ Պողոս Զաքարյանը, արծարծվել են այնպիսի մտքեր, հարուցվել են այնպիսի խնդիրներ, որոնց հետ ծանոթանալը և որոնց հասկանալը կենսական կարիք է մեր կյանքին համար»¹: Նա միաժամանակ նշում է, որ չափազանց քիչ գործ է արված կեսդարյա թարգմանական գործունեության ընթացքում:

Արևմտահայ մամուլում ռուս դասականներին նվիրված հոդվածները, կենսագրականները, ակնարկները, առանձին ուսումնասիրությունները և անգամ ոչ մեծ հաղորդումները հաճախ ուղեկցվում էին թարգմանական խնդիրներին, արդեն կատարված թարգմանություններին նվիրված մեկնաբանություններով, վերլուծություններով և նախաբաններով: Այսպիսի նյութերի համադրական-զուգադրական վերլուծությունները, ինչպես նաև մանրամասն ուսումնասիրությունները վկայում են, որ դեռևս XIX դ. 40-ական թվականներից արևմտահայ մտավորականությանը մտահոգում էր բարձրորակ թարգմանության խնդիրը: Ընդ որում, առաջնային տեղ էր հատկացվում թարգմանչի կողմից երկու լեզուների իմացությանը, տվյալ գրողի կյանքին, ստեղծագործություններին և գրելաոճին քաջատեղյակ լինելուն, բնագիրը գեղարվեստորեն վերստեղծելու կարողությանը: Ի. Դմիտրիև, Գ. Դերժավին, Ի. Կոնյով, Վ. Ժուկովսկի, Ա. Պուշկին, Մ. Լերմոնտով, Ն. Գոգոլ, Ն. Նեկրասով, Ի. Տուրգենև, Լ. Տոլստոյ, Ֆ. Դոստոևսկի, Ա. Չեխով, Լ. Անդրեն, Մ. Գորկի. ահա ոչ լրիվ ցանկն այն ռուս դասականների, որոնց կյանքն ու ստեղծագործությունները ներկայացվում էին արևմտահայ պարբերականներում:

Ռուս դասականների ստեղծագործությունների արևմտահայերեն թարգմանությունները կատարվում էին երկու սկզբունքով՝ բնագրից և միջնորդ լեզվից (հիմնականում ֆրանսերենից). վերջինս պայմանավորված էր նոր ձևավորվող գրական առնչություններով և մշակութային ազդեցություններով: Ռուս

¹ **Զաքարյան Պ.**, Ակնարկներ (Բազմավեպ, 1904, N9, էջ 448-449):

գրականությանը արևմտահայությունը ծանոթանում էր նաև արևելահայ մտավորականության հետ ունեցած գրական սերտ կապերի, արևելահայ պարբերականներում հրատարակվող նյութերի վերատպության շնորհիվ: Կատարված թարգմանությունների վերջում սովորաբար նշվում էր նաև թարգմանչի անունը:

Գիտակցելով բնագրի վերստեղծման դժվարությունները, թարգմանվող հեղինակի կամ տվյալ ստեղծագործության լեզվառճական առանձնահատկությունները՝ թարգմանիչները հաճախ թարգմանության սկզբում կամ վերջում անդրադառնում էին թարգմանական իրենց սկզբունքներին, նշում իրենց նկատառումները, բնագրից կամ միջնորդ լեզվից թարգմանված լինելը և այլն: Այսպես, 1846 թ. «Բազմավեպ» ամսագրի «Բանաստեղծական տեղեկություն» բաժնում տպագրվել է Ի. Դմիտրիևի «Երմակ» պոեմի թարգմանությունը: Անդրադառնալով պոեմի հայերեն թարգմանությանը՝ թարգմանիչը, որի անունը նշված չէ, գրում է. «Երմակ» կոչվող դյուցազնական տաղը, որ հոս հայերեն կթարգմանենք, հավատարմությամբ, հանգին կատարելությունը թարգմանության ճշտությանը կգոհաբերենք»²:

Հայ մատենագրությունը թարգմանություններով հարստացնելու խնդիր էր հետապնդում Բ. Քուշներյանը, երբ Նեկրասովին նվիրված իր հոդվածում նշում էր. «...Ճարտարագույն գրիչ մը. եթե ոչ բոլոր՝ գոնե ընտրավ թարգմանելով՝ մեր հայերեն վսեմ և ճոխ լեզվով Նեքրասովի ոգելից տաղերը, կը հարստացնե հայկական մատենագրությունը»³: Նույնպիսի մտահոգություն ունի նաև Գ. Դերժավինի «Աստված» բանաստեղծության թարգմանիչ Առաքել Նալբանդյանը. «Անվանի նվագը մենք հարկ համարեցինք թարգմանել գրաբար լեզվով,- գրում է նա,- նորա աստվածաբանական և փիլիսոփայական խորին իմաստը առավել դյուրությամբ բացատրելու նպատակով, ըստ կարյաց աշխատեցանք զայն հայկաբանել. հուսով ենք, որ ընթերցողք մեր թերությանց ներողամիտ կլինեն»⁴:

Հարկ է նշել, որ թարգմանական հարցերի մասին գրում էին ոչ միայն թարգմանիչները, ովքեր նախաձեռնում էին այս կամ այն ստեղծագործության թարգմանությունը, այլև նրանք, ովքեր արդեն անցյալ դարի սկզբին զբաղվում էին թարգմանության տեսական խնդիրներով՝ հիմնավորելով տեսական գիտելիքների անհրաժեշտությունն ու կարևորությունն այդ գործում: Օրինակ, «Մասիս» ամսագրում տպագրված՝ Ռ. Պերպերյանին նվիրված հոբելյանական հոդվածում Միհրան Հովհաննիսյանը գրում է. «Թարգմանությունը բաղդատական լեզվաբանության փորձաքարն է. հոն է, որ լեզվի միակողմանի հմտությունը ձախողվածներու կը հանդիպի և կը մատեն թարգմանչին տկար կողմը: Մեկ լեզվեն մյուսը բառերուն առումը երբեք կետ առ կետ չի զուգադիպիր: Թարգմանիչն ուրեմն յուրաքանչյուր լեզվի հատկաբանությանց պատմությունը պետք է սերտե, պետք է ամեն մեկ ոճերու գործածության տեղը որոշե, և ասացվածոց տևականության սահմանը գուշակե: Պետք է թափանցե բնագրին իմաստը, սիրե հոն հայտնված գաղափարները, համակվի անոնցմով, առցվի և հորդե այնպես, որ իր բնիկ լեզվին

² Բազմավեպ, 1846, Դ տարի, N 23, էջ 359-362:

³ Բազմավեպ, 1878, հ. I, Զ, N 1, էջ 169-173:

⁴ Բազմավեպ, 1903, N 3, էջ 225-227:

մեջ ի նորո հեղինակե թարգմանության գիրքը»⁵: Հոգվածագրի այսպիսի հարցադրումները վկայում են այն լուրջ մոտեցման ու թարգմանական չափանիշների մասին, որոնք առաջադրվում էին հայ թարգմանիչներին:

Նշենք, որ ռուս դասականների արևմտահայերեն թարգմանությունների պատմությունն ունի իր որոշակի առանձնահատկությունը. բացի մշակութային տարբերություններից, այն կախված էր նաև ռուսերենի իմացությունից, հրատարակչական, գաղափարական ու քաղաքական խնդիրներից: Թարգմանական վերելքի շրջաններ պայմանականորեն կարելի է համարել 1880-1900 և 1901-1914 թթ, երբ հասարակական-քաղաքական առումով համեմատաբար բարենպաստ պայմաններ էին ստեղծվել մշակույթի զարգացման համար: Այս տեսակետից մեծ դեր էին կատարում արևմտահայ պարբերականները. ռուս դասականների թարգմանությունները տպագրվում էին «Բազմավեպ», «Հայրենիք», «Մասիս», «Բյուրակն», «Շող», «Արևելք», «Ծաղիկ», «Բյուզանդիոն», «Հանդես ամսօրյա», «Ոստան», «Գեղունի», «Արձագանք», «Անահիտ» և այլ հայտնի թերթերում և ամսագրերում:

Թարգմանական գործունեությամբ զբաղվում էին հիմնականում գրականությանն ու մշակույթին մոտ կանգնած, ստեղծագործող մտավորականներ, որոնցից շատերի համար թարգմանությունը ոչ միայն պատահական զբաղմունք չէր, այլև միջոց էր՝ հարստացնելու ազգային գրականությունը, ընդլայնելու արևմտահայ ընթերցողի գրական ճաշակն ու իմացության շրջանակները՝ Ք. Քուշներյան, Հ. Պալյան, Լ. Շանթ, Ե. Օսյան, Է. Ամատունի, Ա. Բեկ-Հովսեփյան, Վ. Ազատյան, Ա. Նալբանդյան, Հայ-Արմեն (Կանայան), Հ. Մարգարյան, Ա. Սարուխանյան, Կ. Ղազարբեկյան և ուրիշներ: Հրատարակչական բարդություններից ելնելով՝ արևմտահայ պարբերականներում հիմնականում տպագրվում էին ռուս նշանավոր բանաստեղծների, ինչպես նաև գրողների առանձին պատմվածքներ, նովելներ, դրամատիկական, վիպական և ուղեգրային բնույթի ստեղծագործություններից որոշ հատվածներ:

Տարբեր ժամանակներում (1843-1814) արևմտահայ մամուլում տպագրված թարգմանությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս գաղափար կազմելու մտավորականության հետաքրքրությունների, գրական ճաշակի, թարգմանական սկզբունքների մասին: Թարգմանվող նյութի ընտրությունը պայմանավորված էր լինում նաև տվյալ պարբերականի հասարակական-քաղաքական դիրքորոշումից, գաղափարական ուղղվածությունից: Դրանցում, ինչ խոսք, կան գեղարվեստորեն համարժեք, ազատ, բառացի կամ պատճենված և անգամ պարզապես փոխադրված թարգմանություններ, որոնց ուսումնասիրությունը վկայում է ստեղծագործական որոնումների, թարգմանական փորձի աստիճանական զարգացման մասին: Թարգմանիչներին մտահոգող կարևորագույն խնդիրներից մեկը, ինչպես այսօր, այնպես էլ այն ժամանակ, գեղարվեստորեն համարժեք թարգմանության խնդիրն էր՝ տաղաչափական, հնչերանգային, երբեմն նաև պատկերային որոշ սկզբունքներ զոհաբերելով: Ինչ խոսք, թարգմանչի տաղանդը, փորձը, անհատականությունը չափազանց կարևոր նշանակություն ունեին: Այս առումով թերևս արժե նշել

⁵ Մասիս, 1901, N 42, էջ 660:

Պուշկինից և Լերմոնտովից կատարած Լևոն Շանթի թարգմանությունները: Ինչպես գրում է ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը. «Լևոն Շանթը միակ արևմտահայ բանաստեղծն է, որի առնչությամբ կարելի է խոսել ռուս գրականության, մասնավորապես Պուշկինի և Լերմոնտովի պոեզիայի ուղղակի ազդեցության մասին»⁶: Ռուս բանաստեղծների ստեղծագործությունների հրաշալի իմացությունը, նրանց պոետական, փիլիսոփայական աշխարհին ծանոթ լինելը, ստեղծագործական աղերսները նպաստել են մնայուն և շատ ինքնատիպ թարգմանությունների ստեղծմանը: Լևոն Շանթն իր թարգմանությունները անվանել է «ազատ»՝ թույլ տալով տաղաչափական բնույթի որոշ շեղումներ (8-9 վանկանի տողերը սեղմելով՝ ընտրել է 7 վանկանի տողը), սակայն կարողացել է հաղորդել Ա. Պուշկինի բանաստեղծության խոհափիլիսոփայական բովանդակությունը, ոգին, ռիթմը, պահպանել պոետական ամբողջականությունը: 1892 թ. Կ. Պոլսի «Հայրենիք» թերթում տպագրվում է Պուշկինի «Телега жизни» բանաստեղծության թարգմանությունը՝ «Կյանքի սայլակը» վերնագրով⁷.

Хоть тяжело подчас в ней бремя,
Телега на ходу легка;
Ямщик лихой, седое время,
Везет, не слезет с облучка.

С утра садимся мы в телегу;
Мы рады голову сломать
И, презирая лень и негу,
Кричим: пошел! ...

Но в полдень нет уж той отваги;
Порастрясло нас; нам страшней
И косогоры и овраги;
Кричим: полегче, дуралей!
Катит по-прежнему телега;
Под вечер мы привыкли к ней
И, дремля, едем до ночлега-
А время гонит лошадей.

Մեր սայլակը սրընթաց
Կը գլտորի սաստկաբար.
Ժամանակն է ծերունի
Իր միշտ անխոնջ կառավար:

Առտուն կանուխ երբ կ'ելնենք
Այդ սայլակը գրավիչ
«Քըշե՛» կ'ըսենք խենթի պես
Անգոսնելով ամեն ինչ:

Բայց կեսօր է, հոգնած ենք.
Ճամբան խիստ է մեզ ցնցած.
Ալ վախնալով փոսերեն՝
Կը՛սենք. «Յիմա՛ր, քիչ կամաց».
Նա կը քշե, ինչպես միշտ.
Եվ մենք վարժված այդ ցնցման՝
Իրիկվան դեմ կը նիրհենք,
Մինչև հասնինք կայարան:

Գողտրիկ ու սքանչելի է հնչում Մոզեսն և Ռիթա ստորագրությամբ Կ. Պոլսի «Շող» ամսագրում տպագրված Ա. Պուշկինի «Цветок» բանաստեղծության թարգմանությունը, որից երկու քառատող ներկայացնում ենք ստորև⁸.

⁶Տե՛ս Ջրբաշյան Էդ., Պուշկինը և հայ բանաստեղծները, Ե., 1999, էջ 126-127:

⁷ Լ. Շանթի թարգմանությամբ «Հայրենիք» թերթում տպագրվել են նաև Ա. Պուշկինի «Հետաքրքիրը» և Մ. Լերմոնտովի «Կյանքի բաժակը» բանաստեղծությունները (Տե՛ս Հայրենիք, Կ. Պոլիս, 3. I, 12. X, 1892):

⁸ Տե՛ս Շող, 1911, N 10:

Цветок	Փոքրիկ ծաղիկ
Цветок засохший, безуханный, Забывтый в книге вижу я; И вот уже мечтою странной Душа наполнилась моя.	Փոքրիկ ծաղիկ, թոշնած, անբույր, ու հոգիս Քանի քանի խոկմունքներով կը հորդի. Երբ քեզ այսպէս՝ գրքույկի մը մոռցված՝ Էջերուն մէջ կը տեսնես:
Где цвел? когда?какой весною? И долго ль цвел? и сорван кем, Чужой, знакомой ли рукою? И положен сюда зачем?	Ո՞ր եւ ծաղկած, ե՞րբ, ո՞ր գարնան, ու ըսէ, Երկա՞ր ատեն մընացած ես դուն ծաղկած, Ո՞ր ձեռք քաղած է քեզ՝ օտա՞ր, թե՞ սրտակից, Եվ ինչո՞ւ քեզ հոս է դրած...

Ռ ուս բանաստեղծների արևմտահայերեն թարգմանություններում հաճախ կարելի է հանդիպել ոչ այնքան ազատ, որքան պարզապես փոխադրությունների, որոնցում թարգմանիչները, հիմնականում պահպանելով ստեղծագործության բովանդակությունը, ազատ են վարվել բնագրի հետ՝ թարգմանությանը հաղորդելով նաև սեփական խոհերն ու տրամադրությունը: Թարգմանության այսպիսի տարբերակ է ընտրել Հայ-Արմենը: 1888 թ. «Արևելյան մամուլ» ամսագրում տպագրված՝ Ա. Պուշկինի երեք տնից բաղկացած «Ամպ» բանաստեղծությունը թարգմանչի մեկանաբանությամբ ու լրացումներով դարձել է վեց տուն: Վերցնելով յուրաքանչյուր տան երկու տողը՝ նա ավելացրել է ևս երկուսը. Հմմտ.

Последняя туча рассеянной бури! Один ты несешься по ясной лазури, Одна ты наводишь унылую тень. Одна ты печалишь ликующий день.	Մըրրիկ ցըրուեց քեզ, ո՛վ վերջին ամպիկ, Գընում ես միայն հանդարտ ու հեզիկ Կապուտակ երկնի մեծ կամարի տակ, Որ վառ փայլում էր սիրուն արեգակ:
	Դու միայն սըփռում ես մըթին ըստուեր Եւ տըխըեցնում ես գեղեցիկ օրեր. Շըքեղ հանդեսներ դու ես խափանում, Երբ քո կաթիլներ երկիր ես թափում ⁹ :

Նման ազատությունները թարգմանության տեսաբանների կողմից մերժվում են, սակայն համաշխարհային թարգմանական պրակտիկան այդպիսի բազմաթիվ օրինակներ ունի, որոնք երբեմն կոչվել են ազատ, երբեմն փոխադրություն, սակայն որպես գրական-պատմական իրողություններ, անշուշտ, հետաքրքրություն են ներկայացնում:

Արևմտահայ մամուլում կարելի է հանդիպել նաև բառացի և տողացի թարգմանությունների, որոնք ընդհանուր առմամբ գաղափար տալով

⁹ Տե՛ս Արևելյան մամուլ, 1888, N 12, էջ 65:

ստեղծագործության մասին՝ հեռու են գեղարվեստական կոչվելուց: Թարգմանական այսպիսի փորձերը ևս օգնում և ճանապարհ էին հարթում հետագա բարձրորակ թարգմանությունների համար¹⁰:

Թարգմանիչների ստեղծագործական որոնումների, բանաստեղծական թարգմանության ինքնատիպ լուծումների մասին պատկերացում է տալիս նաև միևնույն ստեղծագործության մի քանի թարգմանությունների ուսումնասիրությունը: Օրինակ՝ Ա. Պուշկինի „Брожу ли я вдоль улиц шумных...“ բանաստեղծությունը (թարգմանիչներ՝ Ք. Քուլներյան, Հ. Պալյան) ունի երկու թարգմանություն՝ գրաբար (1876 թ.) և արևմտահայերեն (1905 թ.), որոնք երկուսն էլ պահպանել են պուշկինյան բանաստեղծության խոհափիլիսոփայական բովանդակությունը, պոետական շունչը, ռիթմը: Այս բանաստեղծությունն ունի հայերեն մի քանի թարգմանություններ, որոնք տարբեր են և՛ իրենց ընտրած տաղաչափությամբ, և՛ բնագրային իմաստով: Ք. Քուլներյանի և Հովհ. Պալյանի արևմտահայերեն թարգմանությունները ոչ միայն լրացնում են հայերեն թարգմանությունների այս շարքը (Հ. Հովհաննիսյան, Ալ. Ծատուրյան), այլև թարգմանական բոլորովին նոր ու ինքնատիպ լուծումներ են տալիս: Ռուսական քառոտնյա յամբը, որով գրված է այս բանաստեղծությունը (8-9 վանկանի տող) հայերեն թարգմանություններում, սովորաբար, արտահայտվել է կա՛մ 8 վանկանի երկանդամ, կա՛մ 10 վանկանի երկանդամ տողաչափերով¹¹: Օրինակ, Ալ. Ծատուրյանն ընտրել է տասնմեկ վանկանի եռանդամ չափը, որը բավականին լայն է, Ք. Քուլներյանը՝ 11-12, Հովհ. Պալյանը՝ 10 վանկանի չափը: Գրաբարյան ծանր ու լայնաշունչ տողը, որը, մեր կարծիքով, այնուամենայնիվ, հաղորդում է բնագրի ներքին խոհափիլիսոփայական իմաստը, փոխարինվել է Հովհ. Պալյանի և՛ տաղաչափությամբ, և՛ իմաստով բնագրին շատ մոտ ու հարազատ թարգմանությամբ: Ի դեպ, թարգմանիչներն իրենք են վերնագրեր դրել անվերնագիր բանաստեղծությանը՝ «Հիշատակ մահու» և «Խոհեր»: Հմմտ մեկ քառատող.

Брожу ли я вдоль улиц шумных,
Вхожу ль во многолюдный храм,
Сижу ль меж юношей безумных,
Я предаюсь моим мечтам.

Յորժամ շրջիմ ի փողոցի բազմաժխոր
Կամ ի տաճար ինչ ելանեմ մարդաշատ,
Ի հանգանակ պատանեկաց խելացնոր
Խորհուրդք մտացս յուշ ինձ ածեն անընդ-
հատ¹²:
(Ք. Քուլներյան)

Թե փողոցներով շրջիմ աղմկալից
Եվ թե կը մտնեմ բազմամարդ տաճար,
Կամ խոլ պատանյաց ըլլամ խոսակից,

¹⁰ Պուշկինից կատարած Հ.Մարգարյանի թարգմանությունները իրենց բնույթով այսպիսին են, գտնվել են նրա արխիվում և որպես նմուշ նրա «գրական զբոսանքներու» 1939թ. տպագրվել են «Բազմավեպում». տե՛ս **Պուշկին Ա. Ս.**, Կովկաս, Դայակին, թարգմ. Մարգարյան Հ. (Բազմավեպ, 1939, N 8-10, էջ 252):

¹¹ Մանրամասն տե՛ս **Ջրբաշյան Էդ.**, նշվ.աշխ., էջ 50-51:

¹² Տե՛ս Բազմավեպ, 1876, էջ 249-250:

Տամ երազներու զանձըս՝ հավասար¹³:

(Հովհ. Պալյան)

Ռուս դասական պոեզիայի արևմտահայ թարգմանիչներից թերևս անհրաժեշտ է առանձնացնել Հովհ. Պալյանին: Գրական-հասարակական գործիչ, բանաստեղծ ու թարգմանիչ Հովհ. Պալյանը, որի մասին, ի դեպ, կենսագրական շատ քիչ տեղեկություններ կան, 1899-1905 թթ. տպագրվում էր «Բազմավեպ», «Արևելյան մամուլ», «Ծաղիկ» պարբերականներում: Պուշկինից, Լերմոնտովից, Նիկիտինից, Նեկրասովից, Մայկովից, Չեխովից կատարած նրա 30-ից ավելի թարգմանությունները առանձնանում են իրենց գրական ճաշակով, գեղարվեստական մակարդակով, պոեզիայի և տաղաչափության հրաշալի իմացությամբ: Մոռացումից փրկված պալյանական թարգմանությունները այսօր էլ կարող են համարվել այդ հեղինակներից կատարված թարգմանությունների մեջ լավագույնները¹⁴: Այսպես, օրինակ, Մ. Լերմոնտովի „Воздушный корабль” հրաշալի բանաստեղծության թարգմանությունը (մեջբերում ենք երկու քառատող), պահպանել է բնագրի հնչերանգային, տաղաչափական, պատկերային ամբողջականությունը.

Воздушный корабль

Օդաչու նավ

По синим волнам океана,
Лишь звезды блеснут в небесах,
Корабль одинокий несется,
Несется на всех парусах.

Ի մեջ ծովուն կապուտակ
Երբ որ աստղերն ցլանան,
Կը սուրա նավ՝մ միս մինակ,
Առագաստներն կը ծրփան:

Не гнутся высокие мачты
На них флагера не шумят,
И молча в открытые люки
Чугунные пушки глядят...

Բարձր կայմերն չեն ճկուիր,
Չեն ծածանիր յուր դրոշներ,
Նավուն վերա մահալիր
Թնդանոթներ են ցցուեր...¹⁵

Չանդրադառնալով ռուսական պոեզիայից կատարված արևմտահայերեն բոլոր թարգմանություններին, որոնք առանձին ուսումնասիրության նյութ են, հարկ է նշել նաև արձակի մասին: Արևմտահայ պարբերական մամուլում ոչ միայն տպագրվում էին ռուս դասական հեղինակների փոքրածավալ նյութերը (երբեմն հաջորդաբար), այլև տեղեկություններ էին տրվում արևմտահայերեն և արևելահայերեն հրատարակությունների մասին: Օրինակ, Պոլսում հրատարակվող «Կայծ» ամսագրի 1911 թ. օգոստոսի համարում հայտարարություն է

¹³ Տե՛ս Արևելյան մամուլ, 1905, N 38,

¹⁴ Առաջին անգամ 1999 թ., Ա. Ս. Պուշկինի ծննդյան 200-ամյակի կապակցությամբ, Ռ. Տեր-Գրիգորյանը արևմտահայ մամուլից գտել և հրատարակել է բանաստեղծի արևմտահայերեն թարգմանությունների մի ժողովածու, որի մեջ ընդգրկվել են նաև Հովհ. Պալյանի թարգմանությունները: Մանրամասն տե՛ս Պուշկին Ա. Ս., Կյանքի սայլակը, կազմեց և առաջաբանը գրեց Ռ. Տեր-Գրիգորյանը, Ե., 1999:

¹⁵ Բազմավեպ, 1905, N 7, էջ 355:

տպագրվում, որտեղ ասվում է. «Մեր խմբագիր ընկերներեն Էդուարդ Ամատունիի թարգմանությամբ պրակ առ պրակ հրապարակ կելլե տիեզերահոջակ ռուս գրող Լ. Թոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» անունով երկասիրությունը: Արդեն վերջացել է Ա մասի տպագրությունը»¹⁶: Հատկանշական է նաև այն, որ մշակութային որոշակի վերելք գրականության և թարգմանության բնագավառում նկատվում է հատկապես 1900-1914 թթ. ընթացքում, երբ իշխանության գլուխ կանգնեցին երիտթուրքերը, որոնք սկզբնական շրջանում մեծ խոստումներ և ազատություններ էին խոստանում կայսրության տարածքում ապրող ժողովուրդներին: Օրինակ, մինչև Լ. Տոլստոյի մեծածավալ ստեղծագործությունների տպագրությունը 1900-1911 թթ. լույս են տեսնում «Հարություն» 3 հատորով (թարգմ. Ա. Գլանունի և Մալխասյան, Երվանդ Օտյան), «Աննա Կարենինա» (թարգմ. Երվանդ Օտյան), «Պատերազմ և խաղաղություն» (թարգմ. Էդ. Ամատունի) վեպերը, մամուլում տպագրվել են տասնյակ հոդվածներ նրա մասին և այլ թարգմանություններ: Այդ թվականներին Կ. Պոլսի «Ոստան» ամսագրում տպագրվում էին հատվածներ «Մանկություն», «Պատանեկություն», «Երիտասարդություն» եռագրությունից, «Աստված կտեսնի ճշմարտությունը, բայց կը սպասե», «Նշույլ մը մտածումներեն», «Մտորումներ», իսկ «Տաճատ» ամսագրում՝ «Դարերից եկող մեղավորը», առանձին գրքերով՝ «Կորնեյ Վասիլև», «Մարդիկ ինչով են ապրում» ստեղծագործությունները: 1912 թ. Պոլսի «Կարդացեք զիս» հանդեսը տպագրում է հատվածներ «Կենդանի դիակ»-ից և այլն: Հաճախ էլ գրողի մասին կենսագրական, գրականագիտական հոդվածները ուղեկցվում էին թարգմանություններով: Օրինակ, «Ծաղիկ» ամսագրում Նիկոլ Աղբալյանի՝ Ա. Չեխովի կյանքին և ստեղծագործությանը նվիրված հետաքրքրական հոդվածին կից տպագրվել է նաև գրողի «Առանց վերնագիր» պատմվածքը՝ Հովհ. Պալյանի թարգմանությամբ¹⁷: Կամ՝ Նեկրասովին նվիրված Ք. Քուշներյանի հոդվածի հետ նրա թարգմանությամբ ներկայացվել են նաև բանաստեղծություններ¹⁸:

Արևմտահայ մամուլում տպագրված թարգմանության խնդիրներին են վերաբերում նաև ինչպես բանավիճային բնույթի հոդվածները, այնպես էլ տպագրված որևէ թարգմանության մասին գրախոսականները: Դրանցից շատերը այսօր ևս կարող են որոշակի հետաքրքրություն ներկայացնել՝ գաղափար կազմելու համար մեզանում տեսական թարգմանության պատմության աստիճանական ձևավորման մասին: Այս տեսակետից, մեր կարծիքով, ուշադրության են արժանի Գ. Մալխասի երկու հոդվածները, որոնք նվիրված են Պ. Նուբարյանի՝ Կոնիլովի և Լա Ֆոնտենի առակների թարգմանություններին: Քննադատելով Պ. Նուբարյանի կատարած թարգմանությունները՝ նա գտնում է, որ պետք է խիստ տարբերակել բանաստեղծական բնածին տաղանդը «...ոտանավոր շինելու *mécanique* վարժության, վարժություն մը՝ որ առանձին արժեք չունի, եթե

¹⁶ Կայծ, Կ.Պոլիս, 1911, N 5, էջ 2:

¹⁷ Տե՛ս Ծաղիկ, 1905, N 2, էջ 579-583:

¹⁸ Մանրամասն տե՛ս Քուշներյան Ք., Նեկրասով ազգային բանաստեղծ ռուսաց (Բազմավեպ, 1878, N 6-12, էջ 69-173):

չընկերանար բեղմնավոր երևակայության, նուրբ զգայնության, որոշ գաղափարներու էլ ճկուն ոճի հետ՝ որոնց միացումեն միայն կը մարմնավորի ճշմարիտ բանաստեղծը»: Ահա թարգմանչին առաջադրվող չափանիշներ, որոնք դեռ 1901 թ. պահանջում էր Գ. Մալխասը՝ իրավացիորեն նկատելով, որ «հանրությունն ալ կը նախընտրէ կարդալ տասներկու տող, քայց լավ սրբագրված և կատարելագործված երկասիրություն մը, քան կրկին հարդարման կարոտ մեծաքանակ արտադրություն մը, զոր հղկելու համար թարգմանիչը պարտ էր հետևիլ Պուալոյի խրատին»¹⁹:

Անդրադառնալով ընդհանրապես առակի թարգմանության խնդիրներին՝ Գ. Մալխասը կարևոր նշանակություն է տալիս, նախ՝ «բառի և իմաստի ճշտությանը», ապա նաև «գեղագիտական առանձնահատկությունների պահպանմանը»:

Այսպիսով, ռուս դասական գրականությունից կատարված արևմտահայերեն թարգմանությունների համառոտ քննությունն անգամ թույլ է տալիս ասելու, որ հայ-ռուսական գրական առնչությունների մեջ իրենց որոշակի տեղն ունեն նաև արևմտահայերեն թարգմանությունները, որոնք առ այսօր գրեթե չեն ուսումնասիրվել: Մինչդեռ դրանք արժեքավոր են ոչ միայն որպես գրական-պատմական չափազանց կարևոր փաստեր, այլև օգնում են արժեքավորելու արևմտահայ մտավորականության կատարած դերը թարգմանության տեսական ու գործնական սկզբունքների մշակման, հայ գրականության հարստացման ու ռուս դասական գրականության հայացման գործում:

ВОПРОСЫ ПЕРЕВОДА РУССКОЙ КЛАССИЧЕСКОЙ ЛИТЕРАТУРЫ В ЗАПАДНОАРМЯНСКОЙ ПЕРИОДИКЕ №(1843-1914)

ТЕР-ГРИГОРЯН Р. А.

Резюме

Армяно-русские литературные и культурные отношения уходят своими корнями в далекое прошлое. В силу исторических обстоятельств в национальной литературе сформировались две ветви-восточноармянская и западноармянская. Центрами западноармянской культуры были Константинополь, Венеция, Вена, Париж, Смирна... Изучение переводов из русской классической литературы (Никитин, Дмитриев, Крылов, Пушкин, Лермонтов, Тургенев, Некрасов, Толстой, Чехов и др.), статей о переводах и переводчиках убеждают нас в том, что западноармянская интеллигенция сыграла определенную роль в истории развития армянских литературных связей, в разработке теоретических и практических принципов перевода художественного текста.

Русскую классическую литературу переводили на западноармянский язык известные писатели, литературные деятели Л. Шант, Ов. Палян, Ерв. Отян, Эд. Амадуни, А. Саруханян, О. Маргарян и др. Эти переводы до сих пор не являлись предметом исследования, между тем, они представляют несомненный историко-литературный и научный интерес.

¹⁹ Մալխ, 1901, N 25, էջ 412-416: